«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵ

Հասցեատեր՝

Իջևան ֆուտբոլային ակումբ հասարակական կազմակերպություն

Էլեկտրոնային փոստի հասցե՝ ijevanfc@gmail.com

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության

Կարգապահական եւ էթիկայի կոմիտեի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19.03.2026թ.

Զեկուցող (անդամ)
Անդամներ

Նարեկ Ադամյան
Դավիթ Բակլաչյան
Արփի Լազարյան

Վարույթ՝	ՍՖԱԱ Փ-002
Խախտում՝	«Իջևան» թիմի ֆուտբոլիստ Էրիկ Հարությունյանի (23742) կողմից մրցավարին հրելը / Հավելված 1 Ծ, 13-րդ կետ
Առաջնություն՝	ՍՖԱ Ա լիգա Փլեյ-Օֆֆ
Խաղ՝	«Իջևան» - «Էջմիածին ՍԱ », 07.03.2026թ.

ՀՖՖ Կարգապահական եւ էթիկայի կոմիտեն որոշեց՝

«Իջևան ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի քսանապատիկի՝ 20,000 ՀՀ դրամի չափով:

«Իջևան» թիմի ֆուտբոլիստ Էրիկ Հարությունյանին (23472) որակազրկել 3 (երեք) խաղով: Որակազրկումը տարածվում է 2026 թվականի մարտի 7-ից սկսած և ներառում է արդեն իսկ բաց թողնված խաղ(եր)ը (այդպիսիք լինելու դեպքում):

ՀՖՖ Կարգապահական եւ էթիկայի կոմիտեի նախագահ՝

Կարեն Հովհաննիսյան

Ծանուցում

- ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումների բողոքարկման համար որոշմամբ պատասխանատվության միջոցի ենթարկված ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման վերաբերյալ գրավոր հայտարարություն ներկայացնի Կարգապահական գրասենյակ (disciplinary@ffa.am էլեկտրոնային հասցեով)՝ ի գիտություն Բողոքարկման կոմիտեին, համապատասխան որոշման մասին ծանուցվելուց հետո 3 (երեք) օրվա ընթացքում
- Որոշմամբ հիմքերի տրամադրման համար համապատասխան Ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման հայտարարություն ներկայացնելու հետ միասին ներկայացնի որոշման հիմքերը պատվիրելու համար նախատեսված 50,000 ՀՀ դրամի չափով տուրքի վճարումը հավաստող ապացույց: Նշված վճարը վերադարձման ենթակա չէ:
- Բողոքարկման հայտարարությունը ներկայացնելուց հետո 5 (հինգ) օրվա ընթացքում (այն դեպքում, երբ Ֆուտբոլային սուբյեկտը դիմել է որոշման հիմքերը ստանալու խնդրանքով՝ բողոքարկման 5-օրյա ժամկետը սկսում է հաշվարկվել այդ հիմքերը ստանալու պահից) Ֆուտբոլային սուբյեկտը նույն կարգով պետք է ներկայացնի հիմնավորված բողոքը, ինչպես նաև բողոքի ներկայացման համար նախատեսված համապատասխան տուրքը վճարելու վերաբերյալ ապացույցը: Բողոքարկման վճարը կազմում է 100,000 ՀՀ դրամ և ենթակա է վերադարձման յուրաքանչյուր դեպքում ԲԿ որոշմամբ սահմանված չափով՝ ըստ բավարարված պահանջների համամասնության:
- Նշված ժամկետներում բողոքարկման գրավոր հայտարարություն չներկայացնելը հանգեցնում է որոշման վերջնական և պարտադիր դառնալուն, և համարվում է, որ կողմը հրաժարվել է բողոք ներկայացնելու իր իրավունքից: